ՀՏԴ: 947.925+72
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-185

ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՇԵՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՎԻԹ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ*

Հուշարձանն ըստ էության ընդհանուր ճարտարապետական ուսումնասիրության չի ենթարկվել, ուստի, բացի շերտագրական հետազոտություններ իրականացնելուց, ներկայացվում են նաև ընդհանուր ճարտարապետական ուսումնասիրություններն ու վերլուծությունները: Հետազոտություններն իրականացվել են տարածաչափական, հատակագծային, ծավալատարածական և դեկորատիվ հարդարանքային բաղադրիչներով: Առաջարկվում են եկեղեցու ճարտարապետական շերտագրական ուսումնասիրություններն ու իրականացված վերակառուցումների նյութական արտացոլումները: Պարզաբանվում և հստակեցվում են կառույցի հիմնական չորս շերտագրական շերտերը՝ ա) ԺԺԱ, բ) ԺԲ դարի վերջ - ԺԳ դարի առաջին քառորդ, գ) 1887 թ., մինչև 1920-ական թթ., դ) 1920-ական թթ. մինչև մեր օրերը:

Բանալի բառեր՝ Կարսի մարզ, Կարմիր վանքի Կաթողիկե եկեղեցի, ճարտարապետական ուսումնասիրություններ, վերակառուցումներ, նորոգումներ, շերտագրական վերլուծություններ:

Ներածություն

Կարմիր վանքը գտնվում է Արևելյան Հայաստանի Կարս նահանգի համանուն գյուղում: Բնակավայրը գտնվում է Անիից շուրջ 15 կմ հյուսիս՝ Օղուզլուից 6 կմ արևելք՝ Ախուրյանի աջակողմյան վտակի մոտ: 1893 թ. դրությամբ գյուղն ուներ 191, 1907 թ.՝ 253, իսկ 1913 թ. 352 հայ բնակչություն, որոնք զբաղվում էին հիմնականում հողագործությամբ ու անասնապահությամբ: Հարևանությամբ են գտնվել նաև

* Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու, davit.nahatakyan@gmail.com, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

նախկին հայաբնակ, այժմ՝ քրդաբնակ այլ բնակավայրեր[1]:

Այժմ կանգուն մնացած եկեղեցին կոչվում է «Քըզըլվենք քիլիսե», որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է «Կարմիրվանք եկեղեցի», ինչպես նկատում ենք, պահպանվել է հայերեն «վենք» կամ «վանք» բառը: Այսպիսի երևույթ պահպանվել է նաև պատմական Հայքի այլ նահանգներում, ինչպես օրինակ՝ Տայք նահանգի նշանավոր Օշկվանք (Աշոնք) գյուղի տեղական «Օշվենք» տարբերակը[2]:

Հիմնական նյութի շարադրանք

Ընդհանուր առմամբ Անիի մոտակայքում առկա են մի քանի Կարմրավանքեր, որոնցով էլ բացատրվում է աղբյուրների որոշակի խառնաշփոթը: Անիի ավերակներից ոչ հեռու՝ Ախուրյան գետի ափին է գտնվում մյուս Կարմիր վանքը, հաջորդն էլ գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղի մոտ՝ Հոգեվանք-Կարմիրվանքը, ևս մեկը՝ Հայկաձորի Կարմիրվանք-Ղոշեվանքն է ՀՀ Շիրակի մարզի սահմանին՝ չեզոք գոտում, որը Անիից 5-6 կմ է հեռու, Հոռոմոսի վանքից՝ 1-2 կմ[3]:

Այս վանական համալիրը որոշ աղբյուրներում հայտնի է նաև Դպրեվանք անունով, այդպես է անվանվում նաև Անիի մոտ գտնվող Կարմիր վանքը, սակայն, ըստ մեր կատարած աղբյուրագիտական հետազոտությունների, այդպիսի պնդման համար համոզիչ աղբյուրներ չկան, դրա համար չենք կարող պնդել, որ մեր հետազոտության առարկա Կարմիր վանքի Ս. Աստվածածին եկեղեցին պետք է նույնականացնել հայտնի Դպրեվանքի հետ:

Բնակավայրում պահպանվել է համանուն եկեղեցին, որի միջնադարյան անվանումն անհայտ է, սակայն արևմտյան մուտքի բարավորին առկա 1887 թ. արված ընդարձակ արձանագրության մեջ կարդում ենք, որ քահանա Սաղաթիել Տեր-Դավիթեանցը վերանորոգել է

---

[1] **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, ցուցակ 1, Երևան, 1988, էջ 56:

[2] **Մարության Տ.,** Հայ ճարտարապետության հուշարձաններ, Խորագույն Հայք, Երևան, 1978, էջ 104:

[3] Տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Նշվ. աշխ., էջ 57-58:

նշանավոր Կարմիրվանքի Կաթողիկեն: Եկեղեցու ավանդատներից մեկի մուտքի բարավորի վրա առկա է 1218 թ.-ով թվագրվող արձանագրությունը, որում նշված է Թալիտա անունով մի կնոջ նվիրատվության մասին: Եկեղեցում առկա են նաև տարբեր դարերի և ձեռագրերով իրականացված վիմագիր արձանագրություններ, որոնք առանձին ուսումնասիրության կարիք ունեն: Եկեղեցին, ըստ երևույթին, տուժել է 19-րդ դարի վերջին, հավանաբար 1877 թ. ռուս-թուրքական պատերազմից: Ըստ երևույթին՝ բնակավայրը մնացել է հայկական մինչև 1920 թվականը, երբ բնակիչները ստիպված են եղել լքել իրենց տները և գաղթել Խորհրդային Հայաստան: Եկեղեցին դեռ բավականին լավ վիճակում է և ներկայումս քուրդ բնակչության կողմից օգտագործվում է որպես պահեստ-անասնագոմ:

Եկեղեցին կանգնեցված է ցածր բլրի վրա և շրջապատված է մեկհարկանի փոքր գյուղական տներով: Տարածաչափական լուծումներով եկեղեցին իշխող ծավալ է և տեսանելի է շատ հեռվից՝ որպես փարոս բնակավայրին մոտեցողների համար: Այդ լուծումը բավականին տարածված է հայկական ճարտարապետությունում, ինչպես օրինակ՝ Օղուզլուն, Եղեգնամորը, Օձունը, Օշկվանքը և այլն:

Եկեղեցին շուրջ 10x12 մ չափերով, ներքուստ՝ խաչաձև, արտաքինից՝ ուղղանկյան մեջ վերցված կենտրոնագմբեթ տիպի միջին չափերի եկեղեցի է: Հատակագծային լուծումներով առաջացել են չորս ավանդատներ, որոնք ունեն դեպի արևելք ուղղված ավանդատներ: Արևելյան խաչթևն ավարտվում է կիսաշրջան խորանով, իսկ արևմըտյան խաչթևը գրեթե երկու անգամ երկար է կողքայիններից: Ավանդատների խորանները մեկ աստիճան բարձր են իրականացված: Կառույցը, բացի արևմտյան ճակատից, մնացյալ ճակատներում ունի հատակագծում եռանկյունի, կրկնակի անցմամբ ոչ խոր հայկական խորշեր: Արևմտյան ճակատի խորշերի բացակայությունը բացատրվում է նրանով, որ հավանաբար չեն իրականացրել՝ հետագայում գավիթ կցելու նպատակով: Հին լուսանկարում երևում են ցածր, հավանաբար ուշ շրջանի կցակառույցի որմերը, որից պահպանվել են միայն արևմըտյան ճակատի երկու խոռոչները (նկ.1): Եկեղեցու հարավային խաչթևից հավանաբար ուշ շրջանում բացվել է երկրորդ մուտքը:

Ծավալատարածական լուծումներով Կարմրավանքի Կաթողիկեն

աչքի է ընկնում իր դասական Ժ-ԺԴ դդ. համաչափությամբ ու լուծումներով: Քանի որ տեղանքը հիմնականում հարթ է, դրա համար կառույցը պարուրող հիմնախարիսխը, որը համահավասարեցնում է կառույցի հատակը, իրականացված է արևելքից երեք աստիճանի վրա, իսկ արևմուտքից՝ մեկից երկու: Ավելի ստույգ միայն պեղումները ցույց կտան:

Եկեղեցու անցումը գմբեթատակ քառակուսուց դեպի գլանաձև թմբուկին իրականացված է առագաստների օգնությամբ: Գլանաձև թմբուկն ունի չորս պատուհաններ՝ ուղղված աշխարհի չորս կողմերը, որոնք այժմ շարված և փակված են: Գմբեթակիր որմնամույթերը նաև չորս ավանդատների անկյունային մասերն են: Գմբեթակի կամարներն իրականացված են երկաստիճան:

Որմերն իրականացված են հայկական ավանդական միդիս շարվածքով[4]: Քարերը շարված են այսպես կոչված «շախմատաձև» սկզբունքով՝ կարմրավուն և սևամոխրագույն քարերի հաջորդականությամբ: Քարերը հիմնականում փոքր չափերի են և քառակուսիանման: Այս ոճի շարվածքը հատկապես բնորոշ է Զաքարյանների շրջանին, երբ համատարած կիրառություն է ունեցել այս դարերում: Ծածկասալերն իրականացված են հարթ, առանց վալիկների: Վեղարի վրա առկա են ութ ճառագայթով վերևից ներքև իջնող վալիկներ, որոնք տեղադրվել են ծածկասալերը շարելուց հետո՝ առկա կարանները ծածկելու համար: «Շախմատաձև» սկզբունքով են իրականացված նաև 19-րդ դ. ծածկասալերը, որտեղ վեցական իրար հաջորդող կարմրավուն և սևամոխրագույն քարերի հորիզոնական հաջորդականությամբ շարքերով են իրականացված: Վեղարը գագաթի հատվածում սեղմված է, որի պատճառով «լիարժեք» կոնաձև չի ստացվել: Ինչպես երևում է արխիվային լուսանկարից, հարթ, առանց վալիկների ծածկասալերով էլ իրականացված է եղել նաև եկեղեցու ողջ տանիքը, որը հավանաբար նույնպես քահանա Դավիթեանցի վերանորոգման արդյունքներից է:

Հարդարանքային լուծումներում Կարմրավանքի Կաթողիկեն պահպանել է հայկական միջնադարյան ճարտարապետության հիմ-

[4] Տե՛ս **Թորամանյան Թ.**, Շինանյութը և նրանց գործածությունը հին Հայաստանում, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր 1, Երևան, 1942, էջ 134-141:

նական մոտեցումները, երբ ուշադրություն է դարձվել շքամուտքին, պատուհաններին և արտաքին ու ներքին քիվերին: Շքամուտքը վերակառուցվել է, սակայն պահպանվել են կրկնակի դեկորատիվ որմնասյուները և նրանցից ներս՝ շթաքարային հորինվածքով փորագրությունը: Ինչպես նաև պահպանվել է մի պատառիկ բարավորի հյուսվածքով հարդարանքից, որն ամենայն հավանականությամբ արդեն վնասված է եղել, իսկ 1887 թ. իրականացված վերանորոգման արձանագրությամբ բարավորի քարի տեղադրման և հարմարեցման պատճառով վնասվել է:

Պատուհանները նույնպես իրականացված են ԺԲ-ԺԴ դդ. ոճով: Արևելյան լուսամուտը, արևմտյան և հարավային պատուհանները վերցված են ուղղանկյուն շրջանակի մեջ, որոնք հարդարված են հյուսքով և վերցված են այսպես կոչված փակ տիպի շրջանակով: Այս տիպի շրջանակավոր պատուհանները շատ տարածված էին զարգացած միջնադարում, հատկապես Անի-Շիրակի հայկական ճարտարապետական դպրոցում՝ սկսած Ժ դարի վերջերից, սակայն սկիզբ են առել Տայք-Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցում՝ Ժ դարի երրորդ քառորդից[5]: Արևմտյան պատուհանի խոռոչը խաչաձև է, իսկ անմիջապես վերևը երկու քարի շարվածքի բարձրությամբ խաչքար է տեղադրված, որի վերևի անկյուններում էլ մեկ շարի մակարդակով ևս մեկական խաչքար է տեղադրված: Հավանաբար ևս մեկ խաչքար էլ կենտրոնում է եղել տեղադրված: Արևելյան ճակատի լուսամուտին նույնպես հատուկ ուշադրություն է դարձված, որտեղ ուղղանկյուն շրջանակի վերնամասում իրականացված է հավասարաթև խաչ, որը շրջանի մեջ է վերցված, իսկ նրա երկու կողքերում առկա են նուռն ու խաղողը: Հյուսիսային ճակատի, ավանդատների, ինչպես նաև թմբուկի չորս պատուհանները վերցված են կամարունքերի տակ:

Կարմրավանքի Կաթողիկեի քիվերը համեմատաբար ավելի պարզ են իրականացված: Որմերին արտաքինից եզերող քիվեր, ներքուստ՝ խորանից դեպի գմբեթարդ անցնող քիվը բաղկացած է մի քանի պրոֆիլներից: Որոշակի տարբերություն ունի թմբուկի տակի հավա-

[5] **Наатакян Д.** О примерах в декоративном оформлении окон в храмах X века в Тайке и Гугарке, Известия Союза строителей Армении, Ереван, 2013, т. 3-4 (187-188), стр. 73-78.

քող քիվը, որը պարանաձև՝ երկու հյուսվող գծերով է իրականացված: Արտաքին պատերը հավաքող քիվի ստորին մասում իրականացված է կիսաշրջանաձև «դրամներով» գոտի:

Հատակագծային վերլուծությունները ցույց են տալիս, որ այս տիպը բավականին տարածված է եղել հայկական զարգացած միջնադարի ճարտարապետության մեջ: Շուրջ երեք տասնյակից ավելի կառույցներ կան, որոնք սփռված են Հայկական լեռնաշխարհի տարբեր նահանգներում և կիրառվել են հայկական ճարտարապետական բոլոր դպրոցներում: Ինչպես օրինակ՝ Սանահինի, Գանձասարի, Ամբերդի, Հավուց Թառի, Մարմաշենի, Նեղուցի վանքի, Գեղարդավանքի, Սաղմոսավանքի, Խորակերտի, Ամաղու Նորավանքի, Թանադեի, Դադիվանքի, Արդվիի և այլ համալիրների կամ բնակավայրերի եկեղեցիներում (գծ.1,2):

Հատակագծային նմանություններ կան նաև Անիից ոչ հեռու գտնվող կամ Կարսի շրջանի այլ եկեղեցիների հետ, ինչպես օրինակ՝ Անիի Աղջկաբերդի Ս Հովհաննես, Օղուզլուի եկեղեցու, Չանգլիի Եղեգնամոր եկեղեցու և այլն: Կարմիրվանքի Կաթողիկեի հատակագծային լուծումների համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ այն սերում է վաղ քրիստոնեական հայկական ճարտարապետությունից, ինչպիսիք են Կոշի, Սասունիկի, Հնեվանքի փոքր և այլ խաչաձև կենտրոնագմբեթ կառույցները, որոնք արևելյան հատվածում ունեն ավանդատներ[6]:

Ծավալատարածական հորինվածքների համաչափական վերլուծությունների արդյունքում, գմբեթային հատվածի և ընդհանուր ծավալի հետ Կարմիրվանքի եկեղեցում ունենք շուրջ 1:1,2-1:1,3 հարաբերություն, այն համընկնում է Կարսի Առաքելոցի, Անիի Աբուղամրենցի, Հայկաձորի Կարմիրվանքի և մի շարք այլ պաշտամունքային կառույցների հետ: Նույն պատկերն ենք տեսնում նաև երկթեք տանիքների թեքությունների վերլուծություններում: Կարմիրվանքի Ս. Աստվածածին եկեղեցում կենտրոնական ճակտոնների երկթեքությունները կազմում

[6] Տե՛ս **Նահատակյան Դ., Ակոպով Ա., Գրիգորյան Ա.**, Եղեգնամոր (Չանգլի) եկեղեցին IX-XI դդ. Տայք-Գուգարքի միջնադարյան հայկական ճարտարապետական դպրոցի համատեքստում, «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2022, N 1 (25), էջ 208-216:

են գրեթե 45^0, սակայն արևմտյան և արևելյան կողքային նավերի ծածկերի թեքություններն այդքան էլ սուր չեն: Եղեգնամոր տաճարում այն կազմում է գրեթե 45^0, ապա Նորաշենում, Դոլիսխանայում, Խանձթավանքի գլխավոր եկեղեցում, Խախում, Իշխանում՝ $37\text{-}40^0$: Նույնանման պատկեր ունենք նաև Անիի շրջակայքի եկեղեցիներում:

Դեկորատիվ հարդարանքային վերլուծություններն անմիջապես նմանություններ են բերում ԺԲ-ԺԴ դդ. Զաքարյանների շրջանի ճարտարապետության, հատկապես Անիի երկրորդ ծաղկման շրջանի կառույցների հետ: Վերջին մասը խիստ արտահայտվում է հատկապես խորանի հյուսիսային հատվածի խորշի հարդարանքից, փակ տիպի հարդարված պատուհաններից, ինչպես նաև հայկական խորշերի վերնամասի կարմիր և սպիտակ գույնով իրականացված ճառագայթաձև հարդարանքից:

Խնդիրներ են ի հայտ գալիս, երբ մեր հետազոտության նյութի հատակագծային լուծումներն ավելի շատ ցույց են տալիս Ժ-ԺԱ դդ., չնայած այդպիսի հատակագծով մեծ քանակությամբ եկեղեցիներ հանդիպում ենք նաև ավելի ուշ շրջանում, ապա ծավալատարածական, կառուցվածքային և համաչափական վերլուծությունները ցույց են տալիս մեր խնդրո առարկա կառույցի ավելի շատ ԺԲ-ԺԴ դդ. թվագրումը, վերջին թվագրմանն են տանում նաև դեկորատիվ հարդարանքային և խորհրդանշանային լուծումները: ԺԳ դարը հաստատում է նաև եկեղեցու ներսում 1218 թ. թվագրված արձանագրությունը: Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում որոշակի պարզաբանումներ մտցնելու և կարգավորելու այս հարցերը:

Եզրակացություն

Մեր կողմից 2022 թ. ամռանն իրականացված դաշտային հետազոտական աշխատանքների ընթացքում տեղում մանրամասն դիտարկումների արդյունքում առաջարկում ենք հետևյալ շերտագրական տարբերակները, որոնք բնականաբար ավելի կճշգրտվեն և կլրացվեն հետագայում՝ հնագիտական պեղումներից հետո (սխ.1).

ա) Ժ-ԺԱ դդ.: Այսպիսով, բոլոր ճակատների ինչպես արտաքին, այնպես էլ ներքին որմնաշարերը մանրամասն դիտարկելիս հստակ երևան է գալիս առաջին շերտի որմնաշարը, որը նախ և առաջ շարված չէ «շախմատաձև», այլ ավելի շատ կիրառվել են միագույն

կարմրավուն քարեր, որոնք, ի դեպ, ոչ թե քառակուսիանման են, այլ ավելի շատ ուղղանկյունանման: Այս ստորին շարքի շարվածքի քարերի տաշվածքն ավելի լավ է իրականացված, նրանք ավելի շատ են հարթեցված, այնպես որ դժվարությամբ են երևում վերջնական հարթեցնող մետաղական գործիքի հետքերը, մինչդեռ հիմնական ծավալի շարվածքի քարերում հստակ երևում են գործիքի հետքերը: Հայկական ավանդական միդիս շարվածքում հաճախ նկատվում է մի երևույթ, երբ քարերի շուրթերը մի քանի միլիմետր շրջանակաձև հատվում են, որպեսզի շարելու ընթացքում քարերի եզրերը չկոտրվեն: Այս պարագայում առաջին շերտի շուրթերն ավելի բարակ են շարված և բավական հավասար, մինչդեռ նրանից վերևի քարերի շուրթերը մոտ մեկից երկու միլիմետր ավելի հաստ են տաշված և աննշան անհավասար: Վերոնշյալ բոլոր հատկությունները համեմատելով շրջանի Ժ-ԺԱ դդ. ճարտարապետական մնացորդների հետ՝ գալիս ենք այն եզրակացության, որ կառույցի հիմնականում որմնախարիսխը և առաջին մեկից երկու շարք շարվածքը (ոչ ամբողջությամբ) պահպանվել են Ժ-ԺԱ դդ.: Այսինքն, կարելի է ասել, որ այս դարից պահպանվել է լոկ հատակագիծը:

բ) ԺԲ-ԺԳ դդ.: Այս շերտին են պատկանում հիմնական ծավալները, դեկորատիվ լուծումներն ու գրեթե ակնառու ամեն ինչը: Այսինքն, Անիի երկրորդ ծաղկման շրջանում եկեղեցին գրեթե հիմնահատակ վերակառուցվել է և ստացել այն ծավալը, որը հասել է մեզ: Շարվածքը, քարերի տաշվածքը, համաչափությունը, հարդարանքը հստակ բնորոշում են ԺԲ դարի վերջը-ԺԳ դարի առաջին քառորդը: Մեր դաշտային աշխատանքի արդյունքում հայտնաբերել ենք թվով չորս վարպետի նշաններ, որոնք առկա են այս շերտում, ինչպես արտաքին ու ներքին որմերի վրա, այնպես էլ՝ թմբուկի վրա: Վարպետի նշաններն իրականացված են մակերեսային և փոքր չափերով, ինչով էլ հստակ թվագրվում են այս շերտին համապատասխան:

գ) 1887 թ. մինչև 1920-ական թթ.: Երրորդ շերտը վերաբերում է ուշ շրջանին, որտեղ, բացի վիմագրական տվյալներից, առկա են նաև շերտագրական փաստեր: Նախ եկեղեցու վերին հատվածների՝ հիմնականում քիվերի և նրանցից ներքև գտնվող որոշ քարերի վերաշարում և/կամ փոխարինում նորով: Այսինքն, երբ հնարավոր է եղել

տեղադրել հինը, այդպես է արվել, իսկ եթե հնարավորություն չի եղել, ապա նորերով են փոխարինվել: Վերաշարված քիվերը թեք են տեղադրվել, և այդ հատվածներում առաջացրել են քիվի գոտու ալիքներ, որը բացառվում է, որ ԺԲ-ԺԴ դարերում այդպես իրականացնեին: Նոր տաշված քիվերը և որմի քարերը հստակ տարբերակվում են՝ ավելի ցածր որակի իրականացված լինելով: Արևմտյան ճակատի շքամուտքից քիչ ձախ և վերև առկա է նոր քարերի լրացում, որտեղ, ըստ մեր նախնական ընթերցման, առկա է 1911 թ. թվագրությունը: Այս շերտի հիմնական մասը կազմում է եկեղեցու հիմնական ծածկի և վեղարի ծածկասալերի իրականացումը: Վերանորոգվել է գլխավոր մուտքը, որտեղի բարավորի քարին էլ առկա է հայտնի արձանագրությունը: Նորոգվել է թմբուկի արևմտյան պատուհանը, որի վերնամաս հանդիսացող հավանաբար կամարունքով քարի բացակայությունը լրացվել է նորով (նկ. 3, 4):

դ) 1920-ական թթ. մինչև մեր օրերը: Այս շրջանում նախ քայքայվել և թափվել են եկեղեցու՝ ուշ շրջանում իրականացված ծածկասալերը՝ խնամքի բացակայության պատճառով: Շարվել ու փակվել են բոլոր պատուհանները, ինչպես նաև հարավային խաչթևից քանդվել ու բացվել է նոր մուտք (նկ. 1, 2):

Նկ. 1, 2. ըստ՝ https://www.vanker.org/fiche/monuments/karmir-vank-sainte-mere-de-dieu/#photos





Գծ. 1, 2. ըստ՝ Paolo Cuneo, Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, Roma, 1988, p. 728

Նկ 3, 4. Ճարտարապետական մանրամասներ՝ շերտագրության համար:



Սխ.1. Կազմված շերտագրական սխեման:

АРХИТЕКТУРНЫЕ ИССЛЕДОВАНИЯ И СТРАТИГРАФИЯ ЦЕРКВИ КАТОГИКЕ КРАСНОГО МОНАСТЫРЯ ОБЛАСТИ КАРС

ДАВИД НААТАКЯН

Общего архитектурного изучения памятника по сути не проводилось, ввиду чего, помимо стратиграфических исследований, представляются также общие архитектурные исследования и анализы. Исследования проводились с пространственно-измерительными, планировочными, объемно-пространственными и декоративными компонентами. Предлагаются архитектурные стратиграфические исследования церкви и материальные отражения осуществленных реконструкций. Уточняются и подчеркиваются четыре основных стратиграфических слоя структуры: а) X – XI века, б) конец XII – первая четверть XIII века, в) 1887 – 1920-е годы, г) с 1920-х гг. до наших дней.

Ключевые слова. Область Карс, Церковь Катогике Красного монастыря, архитектурные исследования, реконструкция, перестройка, стратиграфический анализ.

ARCHITECTURAL STUDIES AND STRATIGRAPHY OF KATOGHIKE CHURCH OF KARMIR MONASTERY IN THE KARS REGION

DAVIT NAHATAKYAN

As far as no general architectural study of the monument has ever been conducted, in addition to the stratigraphic, general architectural studies and analyses are also presented. The research was carried out with spatial-measuring, planning, volume-spatial and decorative components. The architectural stratigraphic studies of the church and material reflections of the implemented reconstructions are proposed. The four main stratigraphic layers of the structure are specified and emphasized: a) X – XI centuries, b) end of the XII – first quarter of the XIII century, c) 1887 – 1920s, d) from the 1920s up to the present.

Key words: Kars Region, Katoghike Church, Karmir Monastery, architectural research, reconstruction, restructuring, stratigraphic analysis.